Նոտարական ակտի կոդ: 613-20190610-37-3931437
Նոտարական ակտի գաղտնագիր: Y8D0Z0

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ մարզ, քաղաք ԵՂԵԳՆԱՁՈՐ

երկու հազար տասնինը թվականի հունիսի տասին, 10/06/2019

Քաղ. ԳՈՀԱՐԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԸ, ծնված՝ 20/08/1968թ-ին, ՀԾՀ՝ 7008680155, նույնականացման քարտ՝ 005888557, տրված՝ 037-ի կողմից, 11/01/2017թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, ՄԱԿԻՉԻ Փ., 12 Տ , մի կողմից, այսուհետ Վարձատու և

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿ, հասցե՝ Երևան ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ Տ. / 3, գրանցման համար՝ 286.180.05907, ՀՎՀՀ՝ 02508046, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Մուշեղ Մանասյանի, անձնագիր AR 0301771 տրվ. 23.05.2017, 003-ի կողմից, հաշվառված ք. Հրազդան, Ջրառատ տ15 7ա, որի կողմից 08.05.2019թ. տրված թիվ 79-2019 լիազորագրով հանդես է գալիս
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԸ, ծնված՝ 16/06/1976թ-ին, ՀԾՀ՝ 6614760149, նույնականացման քարտ՝ 000093112, տրված՝ 037-ի կողմից, 10/11/2012թ-ին, հաշվառված՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 3 Շ, 5ԲՆ ,այսուհետև Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

2 . Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրի համաձայն Վարձատուն համապատասխան վարձավճարի դիմաց Վարձակալի տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում առևտրի սրահ՝ 131 / հարյուր երեսունմեկ ամբողջ/ քմ. 0.009/ զրո ամբողջ զրո, զրո ինը/ հա. հողամաս, որը գտնվում է ՀՀ, Վայոց Ձոր մարզի Եղեգնաձոր քաղաքի Նարեկացի փողոցի 18/2 / տասնութ կոտորակ երկու/ հասցեում:

2. Նշված տարածքը տրամադրվում է որպես ընկերության գրասենյակ օգտագործելու նպատակով՛

3. Տարածքը պատկանում է Վարձատուին համաձայն անշարժ գույքի կադաստրի Վայոց Ձորի մարզային ստորաբաժանման կողմից 15 ապրիլի 2016թ. տրված թիվ 15042016-10-0002 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի և ազատ է երրորդ անձանց իրավունքներից համաձայն անշարժ գույքի կադաստրի Եղեգնաձոր սպասարկման գրասենյակի կողմից 03 հունիսի 2019թ. տրված թիվ ՄՏ-03062019-10-0076 միասնական տեղեկանքի:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2. Վարձակալն իրավունք ունի

-տիրապետել և օգտագործել վարձակալած տարածքը սույն պայմանագրին և նպատակային նշանակությաը համապատասխան

-վարձակալած տարածքը իր հաշվին ենթարկելու վերանորոգման և բարելավման

- միայն Վարձատուի համաձայնությամբ և նրա կողմից սահմանված պայմաններով ու ժամկետներով վաձակալած տարածքը ենթավարձակալության հանձնելու երրորդ

անձի կամ գրավ դնելու երրորդ անձի մոտ

- պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնել մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Վարձատուին

2. Վարձակալը պարտավոր է

-ժամանակին սույն պայմանագրով սահմանված կարգով մուծել վարձավճարը

- չկատարել վարձակալած տարածքի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի տարածքի բնութագրի վատթարացմանը

- վարձակալման ժամանակաշրջանում կատարել տարածքի ընթացիք վերանորոգում

- Վարձակալը պարտավոր է վճարել բոլոր կոմունալ ծառայությունների՝ էլեկտրաէներգիայի, գազի, հեռախոսի, ջրի և այլ ծառայությունների սահմանված վարձավճարները:

Պայմանագրի կնքման հետ կապված ծախսեի համար վճարում է Վարձակալը

Վարձատուն իրավունք ունի

Արգելելու վարձակալման իրավունքը երրորդ անձին փոխանցելը կամ զիջելը, կամ գրավ դնել երրորդ անձի մոտ

Վաղաժամկետ դադարեցնել պայմանագրի գործողությունը, եթե վարձակալը չի կատարում սույն պայմանագրով սահմանված իր պարտավորությունները, այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Վարձակալին

Վարձատուն պարտավոր է

Չմիջամտել Վարձակալի տնտեսական գործունեությանը, եթե այն չի վնասում շրջակա միջավայրին և չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը

Մեկ ամիս առաջ տեղեկացնել Վարձակալին տարածքն այլ անձանց տնօրինությանը կամ սեփականությանը փոխանցելու վերաբերյալ:

3. Վարձավճարը

- տարածքի վարձակալման վարձավճարը կազմում է ամսական 80000 / ութանասուն հազար/ ՀՀ դրամ

- տարածքի վարձավճարի դրույքաչափի փոփոխման դեպքում Վարձատուն պարտավոր է նոր դրույքաչափի մասին նախօրոք գրավոր տեղյակ պահել Վարձակալին: Տարածքի վարձավճարի դրույքաչափի աճի դեպքում վարձավճարի չափը ենթակա է կիրառման ոչ շուտ, քան դրա մասին գրավոր տեղեկացվելուց տասնհինգ օր անց: Վարձավճարի փոփոխման դեպքում կողմերը կարող են դադարեցնել սույն պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Պայմանագրի ժամկետները

Սույն պայմանագիրը կնքվում է 3 / երեք/ տարի ժամկետով, ուժի մեջ է մտնում սահմանված կարգով անշարժ գույքի կադաստրում իրավունքների պետական գրանցման պահից:

Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնությամբ:

5.Պայմանագրի դադարումը

Սույն պայմանգիրը դադարում է

Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ

Կողմերից մեկի պահանջով միակողմանի վաղաժամկետ լուծարվելու դեպքում

6. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր ուժ, որոնցից մեկական օրինակը պահվում է կողմերի մոտ, մեկը եղեգնաձոր նոտարական տարածքի գրասենյակում և մեկը համապատասխան անշարժ գույքի կադաստրում:

Վարձատու-

Վարձակալ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿԻ լիազորված անձ

ՀՀ ք. եղեգնաձոր, երկու հազար տասնինը թվականի հունիսի տասին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ,, ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ,, նոտարական տարածքի նոտար ՍՈՆՅԱ ՓԱՅԼԱԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ ԳՈՀԱՐԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻ իրավունքներ)ը ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում 1499- ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Սոնյա Փայլակի Պողոսյան

Նոտարական ակտի կոդ: 613-20191106-131-4290240
Նոտարական ակտի գաղտնագիր: Q50TMU

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

/16.06.2019թ-ին կնքած Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում լրացում և փոփոխություն կատարելու մասին/

ՀՀ քաղաք Եղեգնաձոր, երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի վեցին

ՀՀ քաղաքացի **ԳՈՀԱՐԻԿ ՀԱՄԼԵՏԻ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 20/08/1968թ-ին, ՀԾՀ՝ 7008680155, նույնականացման քարտ՝ 005888557, տրված՝ 037-ի կողմից, 11/01/2017թ-ին, հաշվառված՝ ՍՅՈՒՆԻՔ, ԳՈՐԻՍ, ԳՈՐԻՍ, ՄԱԿԻՉԻ Փ., 12 Տ , այսուհետ Վարձատու և ,«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿ, հասցե՝ Երևան ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ Տ. / 3, գրանցման համար՝ 286.180.05907, ՀՎՀՀ՝ 02508046, ի դեմս տնօրեն՝ **ԱՐՏԱՇԵՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ** , ծնված՝ 12/10/1977, , ՀԾՀ՝ 2210770122, անձնագիր՝ AM0287275, տրված՝ 016-ի կողմից 04/05/2011թ-ին, հաշվարված՝ ԳՅՈՒՄՐԻ ԳՈՐԿՈՒ Փ. / 68 / 14-15 , ում անունից 31.10.2019թ տրված թիվ Ն/1448-19 լիազորագրի հիման վրա հանդես է գալիս
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԸ, ծնված՝ 16/06/1976թ-ին, ՀԾՀ՝ 6614760149, նույնականացման քարտ՝ 000093112, տրված՝ 037-ի կողմից, 10/11/2012թ-ին, հաշվառված՝ ՎԱՅՈՑ ՁՈՐ, ԵՂԵԳՆԱՁՈՐ, Պ. ՍԵՎԱԿԻ Փ., 3 Շ, 5ԲՆ , ղեկավարվելով ՀՀօ րենսդրությամբ և 10.06.2019թ-ին Կողմերի միջև կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրով, կնքեցին սույն համաձայնագիրը / այսուհետ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

Կողմերը եկան փոխադարձ համաձայնության միմյանց միջև 10.06.2019թ-ին կնքված ՀՀ ,, Վայոց ձորի մարզ,, նոտարական տարածքի նոտար Սոնյա Պողոսյանի կողմից վավերացված և սեղանամատյանիթիվ 1499 համարի տակ գրանցված տարածքի վարձակալության մասին պայմանագրի 4.1. կետում փոփոխություն կատարելու մասին:

Կողմերը պայմանգրում կատարում են հետևյալ փոփոխությունը

1. **Համաձայնագրի** առարկան

1.1 Վարձակալության պայմանագրի 4.1. կետում վարձավճարի չափը սահմանել 120000 / մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ ներառյալ հարկերը և վարձավճարի հաշվարկային ժամկետը սկսում է գործել 01.11.2019թ. / երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի մեկից / վկայական 10012018-10-0005/:

2. Համաձայնագիրը կնքվում է չորս օրինակից, որոնցից մեկը պահվում է ,, Վայոց ձորի մարզ,, նոտարական տարածքի գործերում, մյուս օրինակները տրվում է կողմերին:

Ստորագրություններ

1. .....

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿԻ լիազորված անձ

Թարգմանությունն ընդունեցի Գրանցված է

Եղեգնաձոր,երկու հազար տասնինը թվականի նոյեմբերի վեցին : Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Եղեգնաձոր նոտտարական տարածքի նոտար՝ Սոնյա Փայլակի Պողոսյանիս

կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: ՀՀ Քաղ- օր-ի 301 հոդվածի համաձայն, սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում: Ստորագրողների ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում 2744 ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Սոնյա Փայլակի Պողոսյան